# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՎԱՐԴԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր    հեռ. /+374/091550059

..04.. Նոյեմբերի 2013թ.

N: 147

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Վարդաձոր համայնքի ավագանու 2013թ.-ի Նոյեմբերի 30-ի նիստի թիվ 28, 29 և 30 որոշումները:

Հարգանքներով,

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ.Սիրականյան

01/17972-13
04 12 2013թ

Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 30-ի թիվ 8 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից հինգը՝ Մ. Ավետիսյանը, Ճ. Կարապետյանը, Գ. Հայրապետյանը, Պ. Մելքոնյանը և Ն. Սիրականյանը, բացակայում էին Կ. Արսենյանը և Ա. Սիրականյանը /առանց հարգելի պատճառների/:

Նիստը վարեց գյուղապետ Ռ. Սիրականյանը:

Քարտուղարեց՝ Վ. Շահբազյանը:

Օրակարգում՝

Հարց-1. Վարդաձոր համայնքի Ալաշկերտի փողոցի թիվ 19 հասցեի հարակից տարածքում էլեկտրատրանսֆորմատոր տեղադրելու մասին,

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-2 Համայնքի 05-084-0013-0013 ծածկագրով, Ալաշկերտի փողոց 8/1 հասցեի 0.0204 հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը /սեփականության իրավունքի վկայական թիվ 15042013-05-0037/ աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին,

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-3 Վարդաձոր համայնքի բնակիչ, զոհված զինծառայողի հայր Սերյոժա Սարգսի Մանուկյանի դիմումի քննարկումը նրան ГАЗ-3110 և MAZDA-CX9 ավտոմեքենաների գույքահարկի արտոնություն տալու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ Մ. Ավետիսյան

Ճ. Կարապետյանը

Գ. Հայրապետյան

Պ. Մելքոնյան

Ն. Սիրականյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28

30-ը Նոյեմբերի 2013թ. գ. Վարդաձոր

***Վարդաձոր համայնքի Ալաշկերտի փողոցի թիվ 19 հասցեի հարակից տարածքում էլեկտրոտրանսֆորմատոր տեղադրելու մասին***

Համաձայն ՀՀ «Հողային օրենքի» 14 և 15 հոդվածների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով,

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Տալ համաձայնություն համայնքի Ալաշկերտի փողոցի թիվ 19 հասցեի հարակից տարածքում տեղադրելու համայնքի «Շահենի դար» կոչվող տարածքի էլեկտրոտրանսֆորմատորը՝ համաձայն քարտեզի:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ Մ. Ավետիսյան

Շ. Կարապետյանը

Գ. Հայրապետյան

Պ. Մելքոնյան

Ն. Սիրականյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29

30-ը Նոյեմբերի 2013թ. գ. Վարդաձոր

***Համայնքի 05-084-0013-0013 ծածկագրով, Ալաշկերտի փողոց 8/1 հասցեի 0.0204 հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը /սեփականության իրավունքի վկայական թիվ 15042013-05-0037/ աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն օտարելու համայնքի 05-084-0013-0013 ծածկագրով, Ալաշկերտի փողոց 8/1 հասցեի 0.0204 հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը /սեփականության իրավունքի վկայական թիվ 15042013-05-0037/ աճուրդ-վաճառքի միջոցով:
2. Աճուրդի մեկնարկային գինը սահմանել Հողի կադաստրային արժեքի 60%-ի չափով, որը տվյալ հողամասի համար կազմում է 41861 դրամ, սակարկման քայլը մեկնարկային գնի 5%-ի չափով:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Միրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ Մ. Ավետիսյան

Շ. Կարապետյանը

Գ. Հայրապետյան

Պ. Մելքոնյան

Ն. Միրականյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30

30-ը Նոյեմբերի 2013թ. — գ. Վարդաձոր

***Վարդաձոր համայնքի բնակիչ, զոհված զինծառայողի հայր Սերյոժա Մարգսի Մանուկյանի դիմումի քննարկումը նրան ГАЗ-3110 և MAZDA-CX9 ավտոմեքենաների գույքահարկի արտոնություն տալու մասին***

Հաշվի առնելով դիմողի կարգավիճակը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Վարդաձոր համայնքի բնակիչ Սերյոժա Մարգսի Մանուկյանին պատկանող ГАЗ-3110 մակնիշի /18OS206 պետհամարանիշով/ ավտոմեքենայի 2013թ. 11000 դրամ գույքահարկի և MAZDA CX9 /34VT887 պետհամարանիշով/ ավտոմեքենայի 2013թ. 157500 դրամ գույքահարկի համար տալ արտոնություն:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ______ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ______ Մ. Ավետիսյան

______ Շ. Կարապետյանը

______ Գ. Հայրապետյան

______ Պ. Մելքոնյան

______ Ն. Սիրականյան